տակում է Պոռշը յուր մեծ արձանագրության մեջ։ Բայց վիմափորի նոնաղարդերը ծառերի հետ կապված չեն, ինչպես Զվարթնոցում կամ Առաքելոցում, այլ բուսական և յերկրաչափական մոտիվներով վոճավորված մի զարդ, նոնով վերջավորած (պատկ. 37—38)։

Անիի նկարազարդ Լուսավորչի թեավոր կենդանակերպների զարդագրությունը, գործվածքների փոխադրությամբ Հայաստան հասած *. մենք միայն ասել կարող ենք, թե նման մոտիվները կրկնված են հաճախ սասանյան արվեստի մեջ **։ Գեղարդի վիմափորների

Խաչաքանդակներ ժայռի վերա Գեղարդում. **Պատկեր 61.**

Ավելի հետաքրքրական է նրանց գործադրության տեղը, գմբեթի-ճառագայթաձև բաժանմունքների մեջ. մեր հնագույն յեկեղեցիներից Ավանը, Հռիփսիմեն, Թալինի մայր յեկեղեցին, Մաստարան գմբեթների ներսից ճառագայթներով մասերի են բաժանված. Strzygowski-ն քրիստոնեական արվեստի ծագման նվիրած յուր աշխատության մեջ հավանական է համարում, վոր ճառագայթների մեջ յեղած տարածությունները նկարչությամբ ծածկված լինեին, այս դեպքում ծեփի վերա, համեմատության առնելով չինական Թուրքեստանի բուդդայական այրերի հարդարանքը, վոր անցած է համարում և քրիստոնեական տաճարների առաստաղների զարդագրության *։ Այս ուղղությամբ համեմատության նյութեր է տալիս նաև յուր զարդարանքի ծագման նվիրած աշխատության մեջ, զարգացման հոսանքը Միջին Ասիայից Արշակունիների միջնորդությամբ կապելով Հայաստանի հետ, վորի ուշ ժամանակի մնացորդներ է համարում գմբեթների զարդարանքները վորոշ չափով հաստատություն են բերում այն մտքին, թե անկարելի չեր, վոր մեր ներսից էլ բազմակողանի գմբեթները զարդարելու սովորությունը լիներ, մանավանդ վոր փոքր ինչ տարբեր ձևի զարդարուն մի գմբեթ էլ ունինք ԺԲ. դարու յերկրորդ կիսից, Թեղենյաց վանքում, ինչպես հիշեցինք, 1167 թվականից։ Կիսով չափ միայն կանգուն և այդ գեղեցիկ գավիթը, չորս հաստահեղույս և 12 վորմասյունների վերա հեցված կամարներով և նրանց վերա հաստատված կիսագմբեթով, վորի ներսի քանդակազարդ մասին գաղափար է տալիս մեր պատկերը (պատկ. 62)։ Սրանց վերա ավելացնենք և այն, վոր անցյալ տարի պատահական պեղումներով Հռիփսիմեի հարավային պատի տակ Խաչիկ վարդապետը գտել և ալաբաստրի հաստ ծեփերի մասեր գունավոր զարդերով, վոր յեթե նորանոր գյուտերով հաստատվի նրանց

* Die Ursprung der christl. Kirchenkunst Lpzg. *1920. 114. 120.*

* Altai—Iran und Völkerwanderung Lpzg. *1917. 132—136. 162—164.*

** *Տես* Восточное Серебро. Смирнов-ի, СП. 1909. *պատկ. 83. 288 և էն։*